իւրաքանչիւր ազգ ըստ վաղէմի սովորութեան իւրոյ, ըլ-
ցանել զկանթեղս և զաշտանակս 'ի սահմանեալ աւուրս,
եւ չդնել ունկն բանից Լատինաց, զի չէր տուեալ նոցա
հրովարտակ վասն այնր, և ոչ գտաւ 'ի Կայսերական դի-
ւանս արձանագրութիւն նորին։ Սակայն Լատինք պնդեալ
կային 'ի բանս իւրեանց, և ոչ կամէին անսալ հրամանին.
զի 'ի դալստեան իւրաքանչիւր հրովարտակի՝ լինէր ա-
տեան մեծ 'ի դատարանի, և լինէր պատուէր չկոգել եւ
չհակառակիլ ընդ միմեանս, սակայն չեղեւ հնար, զի 'ի
չրջանի միոյ տարւոյ եհաս թիւ հրովարտակաց մինչ ցհինգ,
զորս ետ բերել Գրիգոր Պատրիարք, թող զայլ բազմութիւ
դրեանս դատարանի, զորս առնոյր յիւրաքանչիւր դատի։
Հուսկ ուրեմն 'ի վերայ այսքան դրեանց և դատաստանաց
մեղմացաւ փոքր ինչ ընդդիմութիւն Լատինաց, զի սատ-
կագոյնս բորբոքեսցի զկնի աւուրց։ Այլ յերկարիլ այսքան
խռովութեանց եւ դատաստանաց հանդիպեցաւ Գրիգոր
Պատրիարք մեծամեծ ծախուց և տուգանաց, թող զտա-
ռապանս եւ զնեղութիւնս, զոր կրեաց անձամբ անձին.
١٠٢٧ (1617)։

Իսկ Լատինք խորհեցան զայլ ինն չարիս հասուցանել
ազգին։ Զի 'ի նմին ամի մատուցին գիր ամբաստանութեան
առ Արքայ, և չարախօս եղեն զԳրիգոր Պատրիարքէն եւ
զմիաբանութենէ նորին և զազգէն Հայոց, թէ ոչ են ար-
ժանի նոքա մնալ յԵրուսաղէմ, այլ տալ հրովարտակ եւ
ոստիկան հանել զնոսա յԵրուսաղէմէ և աքսորել 'ի կղզին
Կիպրոսի։ Իսկ Սուլթան Օսման Բ. Նախ գրեալ եհարց
զդատաւորն եւ զսայլազդիս Երուսաղէմի՝ զորպիսութենէ
Հայոց եղելոց անդր, եւ նոցա միաբանեալ ընդ իւրեանս
նաեւ զքրիստոնեայս քաղաքին՝ գրեցին պատասխանի՝ թէ
Հայք ոչ ումեք տուեալ են ասա վնասս ինչ, եւ կան 'ի
խաղաղութեան և 'ի չափաւորութեան իւրեանց. և չահս
բազումս մատուցանեն քաղաքիս՝ ուխտաւորք նոցին, եւ
յաւելուն զարդիւնս կալուածոց Սիւլէյմանայ արքային։
Բայց Լատինք հակառակ կացեալ, խափանել կամին զսո-
վորութիւնս նոցա չլուցանել զկանթեղս զաշտանակս, եւ
կատարել զպաշտօնս իւրեանց 'ի Ս. տեղիս։ Յետ հասանե-
լոյ հանրագրութեանս այսորիկ 'ի Դուռն, գրեցաւ հրա-